***«Գրանցված է»***
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
*10 հունվարի 2018 թ.*
*Պետական գրանցման թիվ 10218005*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

29 դեկտեմբերի 2017 թ. N 661-Ն
ք. Երևան

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՌԵԴՈՄԻՑԻԼԱՑՎՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ, ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ, ՌԵԴՈՄԻՑԻԼԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 36.1-ին հոդվածով և 36.3-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 59.2-րդ և 59.3-րդ հոդվածներով.

**Հրամայում եմ՝**

1. Հաստատել ռեդոմիցիլացվող իրավաբանական անձանց շարունակականության նախնական փաստաթղթի ձևը՝ համաձայն N 1 Հավելվածի:
2. Հաստատել ռեդոմիցիլացվող իրավաբանական անձանց շարունակականության փաստաթղթի ձևը՝ համաձայն N 2 Հավելվածի:
3. Հաստատել ռեդոմիցիլացվող իրավաբանական անձանց ռեդոմիցիլացման գործընթացում գտնվելու վերաբերյալ տեղեկանքի ձևը՝ համաձայն N 3 Հավելվածի:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Դ. Հարությունյան**

**Հավելված 1**
**Հայաստանի Հանրապետության**
**արդարադատության նախարարի**
**2017 թվականի դեկտեմբերի 29-ի**
**N 661-Ն հրամանի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ*

## Շարունակականության Նախնական Վկայական

Սույն փաստաթուղթը հավաստում է, որ **[անվանում, կազմակերպաիրավական ձև]** իրավաբանական անձը գրանցված **[երկրի անվանում]** երկրում **[օր/ամիս/տարի]**, **[գրանցման համար]** գրանցման համարով, դիմել է Հայաստանի Հանրապետությունում ռեդոմիցիլացման խնդրանքով (դիմում № [դիմումի համար]) և ստացել է նախնական գրանցում որպես՝

**[անվանում, կազմակերպաիրավական ձև]**

և **[օր/ամիս/տարի]**, ստացել է **[գրանցման համար]** գրանցման համարը:

Սույնով տեղեկացվում է, որ իրավաբանական անձը չի համարվում Հայաստանի Հանրապետությունում ռեդոմիցիլացված կամ Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձ մինչև համապատասխան օտարերկրյա պետության իրավասությունում նրա պետական գրանցման դադարման կամ այդ երկրից վերջնական ռեդոմիցիլացման պետական գրանցման վերաբերյալ փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության գրանցումն իրականացնող մարմնին ներկայացնելը:

Սույն փաստաթուղթը տրված է համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169 օրենքի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝
[ստորագրություն, կնիք] ***անուն, ազգանուն***

[ամսաթիվ]

**Հավելված 2**
**Հայաստանի Հանրապետության**
**արդարադատության նախարարի**
**2017 թվականի դեկտեմբերի 29-ի**
**N 661-Ն հրամանի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ*

**Շարունակականության Վկայական**

Սույն փաստաթուղթը հավաստում է, որ **[անվանում, կազմակերպաիրավական ձևը]** իրավաբանական անձը գրանցված **[երկրի անվանում]** երկրում **[օր/ամիս/տարի]**, **[գրանցման համար]** գրանցման համարով ռեդոմիցիլացվել է Հայաստանի Հանրապետությունում և նրա վերաբերյալ տեղեկությունները գրանցված են պետական գրանցամատյանում որպես՝

**[անվանում, կազմակերպաիրավական ձև]**

և **[օր/ամիս/տարի]**, ստացել է **[գրանցման համար]** գրանցման համարը:

Սույնով հավաստվում է, որ վերը նշված իրավաբանական անձը բավարարում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169 օրենքի պահանջները:

Սույն փաստաթուղթը տրված է համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169 օրենքի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝
[ստորագրություն, կնիք] ***անուն, ազգանուն***

[ամսաթիվ]

**Հավելված 3**
**Հայաստանի Հանրապետության**
**արդարադատության նախարարի**
**2017 թվականի դեկտեմբերի 29-ի**
**N 661-Ն հրամանի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ*
*ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ*

**ՏԵՂԵԿԱՆՔ**

Սույն փաստաթուղթը հավաստում է, որ **[անվանում, կազմակերպաիրավական ձևը]** իրավաբանական անձը գրանցված Հայաստանի Հանրապետությունում **[օր/ամիս/տարի], [գրանցման համար]** գրանցման համարով գտնվում է ռեդոմիցիլացման գործընթացում **[երկրի անվանում]** երկրում (հիմք № **[ռեդոմիցիլացման հնարավորության վերաբերյալ փաստաթղթի համար]** տրված՝ **[օր/ամիս/տարի]**) որպես՝

**[անվանում, կազմակերպաիրավական ձև]**

Սույնով նաև հավաստվում է, որ բացակայում են Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձի՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս ռեդոմիցիլացումը օրենքով բացառող հիմքերը:

Սույն փաստաթուղթը տրված է համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի և «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-169 օրենքի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝
[ստորագրություն, կնիք] ***անուն, ազգանուն***

[ամսաթիվ]